

1011

ՀԱՍՆԵՐ ամսագրի ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏԲՈՆ

№ 4.

23/5

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Կոմեդիա երկու արարածով



891-99  
Ը-Բ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Էլեկտրասպ. Օր. Ն. Ազանեանի, Պոլից. 7  
1913

19 NOV 2011

«Արմենիա» ամսագրի թ. 4, հ. 61  
Հ.Ս.Ս.Ս.Ս. ամսագրի թ. 4, հ. 61

№ 4.

Կր. Հարությունյան

1992-93-2  
- 61 61

US. LITHUANIA



# Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Կոմեդիա երկու արարածով



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրագ. Օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7

1913

# Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Կոմեդիա երկու արարածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Մարիամ տատիկ—գաւառական զգեստով:  
 Տիկին Երանուհի—նրա աղջիկը:  
 Սերոբ 11 տարեկան } Տիկին Երանուհու երեխաները  
 Զարիկ 10 տարեկան }  
 Օննիկ —12 տարեկան } Մարիամ տատիկի թոռ-  
 Յասմիկ —10 տարեկան } ները միւս աղջկանից:  
 Մարգար — 9 տարեկան }

## ԱՐԱՐԻԱՆ ԱՌԱՋԻՆ

Մանկանոց: Դիմացը մի դուռ, միւսը՝ ձախ պատի մէջ:  
 Կահլարասիք—սեղան, աթոռներ, զրքակալներ, պատին՝  
 աշակերտական պատկերներ:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի

Օննիկ (անհանգիստ ման է զայիս) և ՅԱՍՄԻԿ (զիրը  
է կարդում):

ՅԱՍՄԻԿ. Օննիկ, մի բան մտածեցիք վերջապէս:

ՕՆՆԻԿ. Ո՞րտեղից. չարչարուում եմ, չարչարուում, մի բան չեմ գտնում:

ՅԱՍՄԻԿ. Ապա ի՞նչպէս պիտի լինի. ՁԷ սը

մինչև Աստուածածնի տօնը մի շաբաթ է միայն մնացել: Տատիկին ի՞նչ ընծայ տանք:

ՕՆՆԻԿ. Ախ, միայն մի շաբաթ... Տէր Աստուած, իսկ ես դեռ ոչինչ չեմ պատրաստել:

ՅԱՍՄԻԿ. Արի նրա համար ակնոց առնենք:

ՕՆՆԻԿ. Ակնոց ունի. հայրիկը նոր է գնել:

ՅԱՍՄԻԿ. Նոր գոգնոց կարեմ: Դու կտորը կառնես, իսկ ես կը կարեմ: Չէ՞ որ դու դանձանակում շատ փող ունես հաւաքած: Տատիկը շատ կուրախանայ:

ՕՆՆԻԿ. Իսկ դու չունես, ի՞նչ է: Չէ, գոգնոցը երևի մօրաքոյրը կը կարի: Ես մի այնպիսի բան պիտի ընծայեմ, մի այնպիսի բան, որ ոչ ոքի մտքով չի անցնում, մի անսպասելի բան, որ ամենքիցդ աւելի ուրախացնեմ տատիկին: Չէ՞ որ ես նրա ամենամեծ թոռնիկն եմ:

ՅԱՍՄԻԿ. Ի՞նչ կայ որ ամենամեծն ես: Նա ինձ աւելի է սիրում:

ՕՆՆԻԿ. Քէզ:

ՅԱՍՄԻԿ. Այո, ինձ: Իրան հարցրու: Միշտ ինձ այնպէս ամուր գրկում է ու համբուրում: Մագերս անպատճառ պիտի քանդի ու իր ձեռքով նորից հիւսի: Ա՛յնքան հէքիաթներ է ինձ պատմում:

ՕՆՆԻԿ. Ինձ էլ է պատմում:

ՅԱՍՄԻԿ. Հագարից մէկ անգամ. իսկ ինձ նստեցնում է կողքին, ասեղ ու թել է տալիս ձեռքս կամ մի ուրիշ ձեռագործ, համ սովորեցնում է, համ հէքիաթներ պատմում:

ՕՆՆԻԿ. Իսկ ինձ ամեն անգամ իմ կարգացած պատմութիւններն է պատմել տալիս... Միշտ ինդրում է որ երգեմ: Ամեն ասեղ իմ ձայնն է գովում:

ՅԱՍՄԻԿ. Ասենք՝ քո ձայնը իմ ձայնից լաւ չէ:

ՕՆՆԻԿ. Իմ ձայնը:

ՅԱՍՄԻԿ. Այո, քո ձայնը:

ՕՆՆԻԿ. (աւելի ու աւելի մօտենալով) Իմ ձայնը

լաւ չէ:

ՅԱՍՄԻԿ. Այո, այո. քո ձայնը:

ՕՆՆԻԿ. Ապա մեր երգեցողութեան ուսուցչին հարցրու...

ՅԱՍՄԻԿ. Ձեր ուսուցիչը ի՞նչ է հասկանում որ...

ՕՆՆԻԿ. Ո՞վ, մեր ուսուցիչը բան չի հասկանում...

ՅԱՍՄԻԿ. Այո, հէնց ձեր ուսուցիչը:

ՕՆՆԻԿ. Սրան մտիկ, է: Մեր ուսուցչին չի հաւանում: Ձեր ծըւծըւան օրիորդի նմանն է, հա՛:

ՅԱՍՄԻԿ. Մեր օրիորդն է ծըւծըւան:

ՕՆՆԻԿ. Հա՛, ձեր օրիորդը: Գալիս է, մեր ուսուցչից ծածուկ սովորում ու ձեզ դաս տալիս:

ՅԱՍՄԻԿ (բռնկում է. արագ-արագ). Մեր օրիորդը լայեղ էլ չի անում ձեր ուսուցչի հետ խօսելու: Մեր օրիորդի պճեղին էլ արժանի չէ ձեր ուսուցիչը, մեր օրիորդի շաքին էլ արժանի չէք բոլորդ... (Ներս է վազում Մարգարը):

ՏԵՍԱՐԱՆ II

ՆՈՅՆՔ և ՄԱՐԳԱՐ

ՕՆՆԻԿ. (շտապ-շտապ) Մարգար, Մարգար, իմ ձայնն է լաւ թէ՞ Յասմիկինը:

ՅԱՍՄԻԿ. (նոյնպէս) Մարգար, տատիկը իմ ձայնն աւելի է հաւանում թէ՞ Օննիկինը:

ՕՆՆԻԿ. Անցեալ կիրակի տատիկը ինձ երգել տաւ թէ՞ Յասմիկին:

ՅԱՍՄԻԿ. (ընդմիջելով) Անցեալ կիրակի մէկ անգամ տատիկի բերանից դուրս թաւ որ երգես, դու էլ հալած եղի տեղ ընդունեցիր: Մարգար, չէ՞ որ տատիկը իմ ձայնն է միշտ գովում:

ՄԱՐԳԱՐ. Ո՞ւմ ձայնը:

ՕՆՆԻԿ.

ՅԱՍՄԻԿ. { (միասին) Ի՛մը, ի՛մը:

ՄԱՐԳԱՐ. Ձե՛րը: Իսկի էլ չէ: Նա ինձ է «զանգակ» ասում: Հէնց որ ինձ տեսնում է, զրպանից անպատճառ չոր միրգ, կանֆետ է հանում ու ասում. «ձայնիդ մեռնեմ, Մարգար ջան»:

ՅԱՍՄԻԿ. Քեզ այդ ասում է, որովհետեւ դու ամենքիցս փոքրն ես:

ՕՆՆԻԿ. Քեզ «զանգակ» է ասում, որովհետեւ ամենքիցս շատ ես խօսում:

ՄԱՐԳԱՐ. Դուք պակաս էք խօսում:

ՕՆՆԻԿ. Սպասեցէք, ես ինքս տատիկին կը հարցնեմ՝ ում ձայնն է աւելի հաւանում:

ՅԱՍՄԻԿ. Նա տղաներին չի սիրում:

ՄԱՐԳԱՐ. Կը տեսնես, դեռ Աստուածածնի

տօնը գայ: Տատիկին մի այնպիսի ընծայ եմ պատրաստում, մի այնպիսի ընծայ, որ բոլորիդ մոռանայ...

ՕՆՆԻԿ և ՅԱՍՄԻԿ (միասին). Դու արդէն պատրաստել ես:

ՄԱՐԳԱՐ. (հպարտ) Ի հարկէ:

ՕՆՆԻԿ և ՅԱՍՄԻԿ (միասին). Ի՞նչ, ի՞նչ:

ՄԱՐԳԱՐ. Ապա իմացէք:

ՕՆՆԻԿ. Մատնոց:

ՄԱՐԳԱՐ. Այնքան ունի սր...

ՅԱՍՄԻԿ. Թաշկինակ:

ՄԱՐԳԱՐ. Թաշկինակը ընծայելու բան է որ...

ՕՆՆԻԿ. Թէյի բաժակ:

ՅԱՍՄԻԿ. Քորոցները բարձ, նօսր սահր...

ՄԱՐԳԱՐ. Ձէ, չէ, մի այնպիսի բան, մի այնպիսի բան, որ ամեն օր աչքի առաջ լինի, ինձ յիշի:

ՅԱՍՄԻԿ. Հայելի...

ՕՆՆԻԿ. Քո լուսանկարը:

ՄԱՐԳԱՐ. Ձեմ ասի, չէ: Իմ գազանիքն է:

ՕՆՆԻԿ և ՅԱՍՄԻԿ. (միասին) Գազանիքը:

ՄԱՐԳԱՐ. Ոչոքիդ չեմ ասի: Ուղում էք ինձանից իմանաք, ինքներդ պատրաստէք, ինձ փուստ թողնէք:

ՅԱՍՄԻԿ (արհամարհանքով) Շատ մեծ բան ես քո գլուխը կարծում: Գազանիք է, թող փորումդ մնայ:

ՕՆՆԻԿ (նոյնպէս). Քո մտածածը ապա ի՞նչ կը լինի:

ՄԱՐԳԱՐ (Չգրացնելով). Դուք հօ գեռ ոչինչ  
չէք մտածել, հէ, հէ: Ձեմ ասի, չեմ ասի: (Ներս  
են մտնում Սերոբն ու Զարիկը):

Յ Ե Ս Ս Ր Ա Ն III

ՆՈՅՆԵՐԸ ԵՆ ՍԵՐՈՒՅ ՈՒ ԶԱՐԻԿԸ

ՅԱՍՄԻԿ (ընդատաջ զնալով). Ի՞նչ լաւ է որ  
եկաք: Արիք միասին մտածենք թէ տատիկին ինչ  
ընծայ տանք:

ՍԵՐՈՒՅ ու ԶԱՐԻԿ (հպարտ-հպարտ) Մենք ար-  
դէն մտածել ենք:

ՕՆՆԻԿ. Արդէ՞ն:

ՅԱՍՄԻԿ. Ի՞նչ բախտաւոր էք:

ՄԱՐԳԱՐ. Ես էլ եմ մտածել:

ԶԱՐԻԿ. Ես մի այնպիսի բան եմ մտածել,  
այնպիսի բան, որ գիտեմ՝ տատիկը անպատճառ  
կը հաւանի: Ա՛յնպէս ինձ կը համբուրի:

ՅԱՍՄԻԿ. Զարիկ ջան, քեզ մատաղ, ասա՛  
ի՞նչ ես մտածել:

ԶԱՐԻԿ. Չի կարելի, չի կարելի:

ՅԱՍՄԻԿ. Ինչո՞ւ:

ՍԵՐՈՒՅ. Ինձ էլ չի ասում:

ԶԱՐԻԿ. Դա իմ գաղտնիքն է:

ՅԱՍՄԻԿ. Գաղտնիք:

ԶԱՐԻԿ. Ոչոքի չեմ ասի, ոչոքի:

ՄԱՐԳԱՐ. Ես էլ ոչոքի չեմ ասում:

ԶԱՐԻԿ. Այ կը տեսնէք՝ ինչ անսպասելի բան  
կը լինի: (Օղի մէջ մի խորհրդաւոր նշան է անում):

ՍԵՐՈՒՅ. Շատ մի պարծենայ: Իմ մտածա-  
ծից լաւ չի լինի:

ԶԱՐԻԿ. Ո՞վ ասաւ. հազար որ մտածես, իմ  
գտածից լաւը չես գտնի:

ՄԱՐԳԱՐ (հպարտ). Ասենք՝ իմ մտածածին  
չէք հասնի:

ՅԱՍՄԻԿ (աղերսանքով). Սերոբ ջան, Սերոբ,  
դու հօ լաւ աղայ ես, դու հօ ինձ սիրում ես:  
Ասա՛ ի՞նչ ես մտածել:

ՍԵՐՈՒՅ. Օ-ժ, մի այնպիսի բան, մի այնպի-  
սի բան... Քանի որ է՛ տատիկի ետեից ման եմ  
գալիս, նայում՝ նրա սիրտն աւելի ինչ է ու-  
ղում... Ո՛ւ... Ո՛ւ...

ՅԱՍՄԻԿ. Ո՛ւ...

ՍԵՐՈՒՅ. Ապա իմացիր:

ՅԱՍՄԻԿ (խորհրդաւոր. ականջին) Հողաթափ-  
նէր:

ՍԵՐՈՒՅ. Ո՛չ:

ՅԱՍՄԻԿ. (նոյնպէս) Երեսուրբիչ:

ՍԵՐՈՒՅ. Ձեմ ասի, չէ: Դա իմ գաղտնիքն է:

ՅԱՍՄԻԿ. Այ, Տէր Աստուած, այսօր ամենքդ  
էլ ի՞նչ անտանելի էք:

ՕՆՆԻԿ. (որ մինչեւ այդ ըոպէն բեմի խորքում  
կանգնած՝ շարունակ խորը մտածում էր) Հնարե-  
ցի, ես էլ հնարեցի (բոլորը նրան շրջապատում են):

ԲՈՂՈՐԸ. Ի՞նչ, ի՞նչ:

ՕՆՆԻԿ. Մի այնպիսի բան, մի այնպիսի  
բան...

ԲՈՂՈՐԸ. Ասա՛, շուտով ասա՛: Լաւ բան:

ՕՆՆԻԿ. Ամեն առաւօտ, հէնց որ տատիկը տեղիցը վեր կը կենայ, ինձ կը յիշի, ամբողջ օրը, ամեն բոպէ ինձ կը յիշի, իրիկունն էլ պառկելիս ինձ կը յիշի:

ԲՈՂՈՐԸ. Հոգիներս հանեցիր. շուտով ասա՛: Ի՞նչ, ի՞նչ:

ՕՆՆԻԿ (հպարտ). Դա իմ գաղտնիքն է:

ԶԱՐԻԿ. Օննիկ, Օննիկ, ինձ հօ կասէս, մենակ ինձ: Յիշում ես, անցեալ կիրակի, մեզ մօտ որ էիք, իմ խնձորս քեզ տւի:

ՕՆՆԻԿ. Դուք մեզ ասում էք, որ մենք ձեզ ասենք:

ՅԱՍՄԻԿ. Հա՛, մենք ի՞նչու պիտի ձեզ ասենք: Դեռ դուք ասացէք:

ՄԱՐԳԱՐ. Օննիկ չասես, թող դեռ սրանք ասեն:

ԶԱՐԻԿ. Ուզում էք մեզանից խօսք դուրս քաշէք, հա՛:

ՍԵՐՈՒՖ. Ի՞նչ խորամանկն էք: Կարծում էք, ձեր միտքը չէ՞նք հասկանում:

ՄԱՐԳԱՐ. Տատիկին տարել էք ձեր տուն, էլ մի բոպէ հանգիստ չէք թողնում:

ՅԱՍՄԻԿ. Տան մէջ ի՞նչ ասես՝ շինել էք տալիս:

ՕՆՆԻԿ. Ամեն անգամ հիւանդանոցում էք. գիշերն էլ չէք թողնում որ գլուխը բարձին դնի:

ԶԱՐԻԿ և ՍԵՐՈՒՖ (միասին). Նա մեզ աւելի է սիրում բան թէ ձեզ:

ՕՆՆԻԿ, ՅԱՍՄԻԿ և ՄԱՐԳԱՐ (պաշարելով նրանց) Մոտ էք ասում, սո՛ւտ:

ՍԵՐՈՒՖ. Մեր մայրիկը նրա ամենապիղի աղջիկն է:

ՄԱՐԳԱՐ. Չէ, մեր մայրիկը:

ՅԱՍՄԻԿ. Մեր մայրիկը փորձած է, ձերը չէ:

ԶԱՐԻԿ. Նա ձեր տունը շաբաթը մէկ անգամ էլ ոտ չի ուզում դնել:

ՄԱՐԳԱՐ. (գնալով դէպի ծախ դուռը) Սպասեցէք, դնամ մայրիկիս խնդրեմ, որ տատիկը մեզ մօտ ապրի:

ԶԱՐԻԿ և ՍԵՐՈՒՖ. Տատիկը մերն է, մերը:

ՄԱՐԳԱՐ. (վերադառնում է). Չէ, մերն էլ է:

Այ, դնամ մայրիկին ասեմ (գնում է):

ՕՆՆԻԿ. Տատիկին մեր տուն թէ որ չըրբերենք, կը տեմնէք:

ԶԱՐԻԿ. Էգուց չէ՛ էլ օր:

ՍԵՐՈՒՖ. Բերէք ու պարծեցէք:

ՅԱՍՄԻԿ. Դուք մի տուն գժեր էք:

ՍԵՐՈՒՖ. Իսկ դուք... դուք:

ԶԱՐԻԿ. Գնանք տուն, Սերոբ, անթէ որ սրանց հետ խօսենք:

ՅԱՍՄԻԿ. Դու ո՞վ ես, որ մեզ հետ չես ուզում խօսել:

ՍԵՐՈՒՖ. Մի ամիս է մտածում էք, մտածում, դեռ մի բան չէք հնարել տատիկի համար:

ՕՆՆԻԿ. Ես ձեզնից լաւն եմ մտածել:

ՅԱՍՄԻԿ. Ես ուզում եմ մի այնպիսի բան ընծայեմ, մի այնպիսի բան...

ԶԱՐԻԿ. (Նմանեցնելով). Մի այնպիսի բան,

մի այնպիսի բան, մի այնպիսի բան... Ոչինչ չէք մտածել, սուտ ասում էք թէ գաղտնիք է...

ՕՆՆԻԿ (ըստկացած) Իսկ դուք ի՞նչու էք սուտ թէ գաղտնիք է:

ՍԵՐՈՅ. Ձեր ջգրու գաղտնիք՝ կը պահենք, ձեր ջգրու: Գնանք, Չարիկ (զնում են դիմացի դռնով):

ՕՆՆԻԿ. (Նրանց հետևելով) Մենք էլ ձեզ բան չենք ասի, մենք էլ... Գժեք, գժեք... (դուրս է գնում):

## ՏԵՍԱՐԱՆ VI.

### ՅԱՍՄԻԿ (մենակ)

ՅԱՍՄԻԿ. (գրեթէ լաց լինելով) Տէր Աստուած, Տէր Աստուած, բոլորն արդէն մի բան մտածել են, մենակ ես եմ մնացել, մենակ ես... (Չունենրը կոտորտելով): Բոլորն էլ լաւ ընծաներ կը պատրաստեն, իսկ ես... ես... ինձ ի՞նչ կը մնայ: (Ման է գալիս): Յետոյ ամենքը կը սկսեն ինձ ծաղրել: Էն օձի լեզու Չարիկն էլ, բարկացնող Սերոբն էլ, էն մոծակ Մարգարն էլ: Ախ, ի՞նչ անեմ, ո՞ւմ դիմեմ: Ի՞նչ տամ... Հողաթմփ... գոգնոց... թաշկինակ... մատնոց... երեսուրբիչ... Կնոց, կնոց... Արդեօք չընծայեմ... Ա-ն, գտնայ, մի այնպիսի բան, մի այնպիսի բան... Ոչոքի չեմ ասի, ոչոքի... Իմ գաղտնիքն է:

Վ ա Ր ա գ ո յ Ր

## ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տիկին Երանուհու ընդունարան: Դիմացը դուռ, աջ կողմը՝ դուռ: Առանձին խնամքով կարգի բերած սենյակ:

## ՏԵՍԱՐԱՆ I

ՋԱՐԻԿ եւ ՅԱՍՄԻԿ, ապա ՕՆՆԻԿ, ՄԱՐԳԱՐ եւ ՍԵՐՈՅ (ամբողջ տեսիլը խաղացում է շտապ-շտապ լարած):

ՋԱՐԻԿ (Ներս վազելով Յասմիկի հետ աջ դռնով շտապով դուրս է նայում դիմացի դռնով): Տատիկն այս ի՞նչ ուշացաւ: Այսքան էլ կը մնան եկեղեցուս:

ՅԱՍՄԻԿ (նոյնպէս) Երեխ՝ ճամփին մէկին պատահել է, խօսում է:

ՋԱՐԻԿ. Մենք որ դուրս եկանք, պատարագը վերջանալու վրա էր: Երանի շուտով գայ... Իմ ընծան այնպէս պիտի հաւանի...

ՅԱՍՄԻԿ. Իմը աւելի... Այ, սիրուն արկղի մէջ եմ դրել, գունաւոր թղթի մէջ փաթաթել ու գեղեցիկ ժապաւէնով կապել... (դէս ու դէն նայելով): Այս ի՞նչ լաւ դարդարել էք սենեակը:

ՋԱՐԻԿ. Ես և Սերոբը ամբողջ առաւօտ հաւաքում էինք... Տես, տատիկի պատկերը ծաղիկներով պատել եմ... Վայ, այս աթոռ ո՞վ է այստեղ դրել (ուղղում է):

ՕՆՆԻԿ (փունջը ձեռքին ներս է վազում աջ դռնով). Այս փունջը սրտեղ դնեմ: Տատիկը գայ թէ չէ, տեսնի:

ՉԱՐԻԿ. Ի՞նչ սիրուն փունջ է...

ՅԱՍՄԻԿ. Բեր, այստեղ բեր, կը դնենք այս անկիւնում, բաժակի մէջ: (Հոտ է քաշում) Ի՞նչ անուշ հոտ ունի:

ՕՆՆԻԿ. Թէ, աւելի լաւ է՝ միւս անկիւնում դնենք (վազում է դէպի միւս անկիւնը):

ՄԱՐԳԱՐ. (դիմացի դռներով ներս վազելով հեռագիրը ձեռքին): Հեռագիր, հեռագիր... Քեռուց հեռագիր: Տատիկին շնորհաւորում է...

ՉԱՐԻԿ. Ուներդ, օտներդ սրբիր. յատակը կեղտոտեցիր: Տատիկը քո պատճառով կը բարկանայ. գնա, գնա սրբիր: (Մարգարը շփոթւած դուրս է վազում):

ՅԱՍՄԻԿ (աջ դռնով). Սերոբ, Սերոբ, մի լաթ ու խոզանակ բեր, Մարգարը փօշօտ ոտներով ամբողջ յատակը կեղտոտեց: Շուտ արա:

ՕՆՆԻԿ. Չէ, այս անկիւնում լաւ չի երևում: Աւելի լաւ է այս սեղանի վրա դնենք, բազմոցի առջև (դնում է: Սերոբը մտնում է խոզանակն ու լաթը ձեռքին):

ՍԵՐՈՐ. Ո՞րտեղ է կեղտոտել:

ՉԱՐԻԿ և ՅԱՍՄԻԿ. Այ տես... այստեղ այստեղ էլ... (Սերոբը սրբում է):

ՍԵՐՈՐ. Ամենից առաջ ես կը սկսեմ խօսել և ընծաս կը տամ:

ՕՆՆԻԿ (վէճի մտնելով), Չէ, ես. ես ամենամեծ թուն եմ:

ՅԱՍՄԻԿ. Դուք տղաներ էք. աղջիկներին պիտի տեղ տաք:

ՄԱՐԳԱՐ (ներս վազելով). Ուներս սրբեցի: Հեռագիրը սրտեղ դնեմ:

ՉԱՐԻԿ. Բեր ես կը տամ:

ՄԱՐԳԱՐ. Ի՞նչու դու: Ես ինքս կը տամ: Հէնց որ ներս կը մտնի, իրան կը տամ:

ՍԵՐՈՐ. Այդպէս չեղաւ: Եկէք, թէ ընծաները և թէ հեռագիրը հանդիսաւոր կերպով տանք...

ՄԱՐԳԱՐ. Չեմ ուզում. հեռագիրը ես պիտի տամ:

ՉԱՐԻԿ. Դու ի՞նչպէս պիտի կարգաս ու թարգմանես...

ԲՈՒՈՐԸ. Հա՛, հա՛, դու չես կարող... չես թարգմանի...

ՄԱՐԳԱՐ. Բայց ես ուզում եմ...

ՕՆՆԻԿ. Եկէք վիճակ զցենք ու հերթով մեր ընծաները տանք: (Զանգի ձայն):

ԲՈՒՈՐԸ. Տատիկն է, տատիկն է: Շուտով, շուտով (խոնկելով փախչում են աջ դռնով: Բեմը մի րոպէ դատարկ է մնում: Նորից ու նորից զանգի ձայն):

## ՏԵՍԱՐԱՆ II

### ՏԱՏԻԿ և ԵՐԱՆՈՒՀԻ

ԵՐԱՆՈՒՀԻ (անցնում է բեմով աջ դռնից դէպի դիմացի դուռը ու գնում տատիկին դիմատրեղու, կռան տակից բռնած՝ տատիկին ներս է բերում):

ՏԱՏԻԿ. Ողորմի Աստուած:

ԵՐԱՆՈՒՀԻ. Քեզ էլ սղորմի:

ՏՄՏԻԿ. Էսօրւայ պատարագի գօրութիւնը քեզ պահապան լինի, որդի. դաւակներովդ ուրախանաւ:

ԵՐԱՆՈՒՀԻ (համբուրելով): Տօնդ շնորհաւոր, մայրիկ ջան: Էս ի՛նչ ուշացար: Երեխաների համբերութիւնը հատաւ:

ՏՄՏԻԿ. Ո՞րտեղ են, ո՞րտեղ են իմ նախշունները, իմ բլբուլները:

ԵՐԱՆՈՒՀԻ. Չը յոգնեցի՞ր: Երեկ ամբողջ պատարագը ոտքի վրա անց կացրիր:

ՏՄՏԻԿ. Օրհնած խաղող եմ բերել (ցոյց է տալիս գունատը - թաշկինակը): Կանչիր ճուտերին, բաժանեմ:

ԵՐԱՆՈՒՀԻ. Գու դեռ նստիր, հանգստացիր. (բերում է նստեցնում բազկաթոռի վրա): Առաւօտւանից բան չես կերել: Սուրճը պատրաստել եմ, քեզ էինք սպասում:

ՏՄՏԻԿ. Էս ի՛նչ սուս ու փուս է էսօր մեր տունը. (գրպանից հանում է ընծութի տուփը, քիժախտ է քաշում, էլի ետ դնում գրպանը. փրշտում է):

ԵՐԱՆՈՒՀԻ. Առողջութիւն: (աջ դռնով) Երեխաներ, տատիկը եկել է, ձեզ համար օրհնած խաղող է բերել. (ներս են մտնում կարգով, փութեթները ձեռներին Յասմիկը, Սերոբը, Մարգարը, Օնիկն ու Զարիկը):

ՏԵՍԱՐԱՆ III.

ՆՈՅՆԵՐԸ և ԵՐԵՄԱՆԵՐԸ

ՏՄՏԻԿ. Եկէք, եկէք, իմ աղունակներ, իմ աչքիս ճրագներ... Ի՛նչքան ժամանակ է ձեզ չեմ



տեսել. եկէք, մէկ մէկ հոտ անեմ իմ վարդեր, իմ մանուշակներ...

ՅՄՄՄԻԿ. (առաջ գալով, հանդիմանալով): Ես տատիկ, տօնդ շնորհաւոր: Մայրիկս պատուիրեց որ քեզ լաւ համբուրեմ ու այս փութեթը քեզ տամ. ինքն էլ մի կէս ժամից յետոյ կը գայ: Շատ ապրես մեզ համար, դեռ շատ տարիներ պատմես մեզ քո սիրուն հէքիաթները: Այս ընծան էլ ընդունիր իմ կողմից. միշտ, երբ ձեռքդ կառնես, յիշիր որ քո «անշնորհք» Յասմիկը անչափ, անչափ սիրում է իր բարի տատիկին:

ՏՄՏԻԿ. (յուզած) Էս քաղցր լեզւիդ մեռնեմ, անուշիկ ջան... Արի, արի, կրճքիս սեղմեմ, իմ սիրունիկ (համբուրում է եւ երեսին նայում): Քեզ որ մտիկ եմ տալիս, մայրիկիդ եմ յիշում, երբ նա քո չափ էր (նորից համբուրում է եւ երկու փութեթները դնում է սեղանի վրա):

ՍԵՐՈՒՅ. (առաջ գալով եւ հեռագիրը կարդալով) Տատիկ ջան, քեռին քեզ հեռագրում է. «Հեռու աշխարհ թռած անտուն ծիտիկդ եմ ես և այսօր կարօտով յիշում եմ քո մայրական տաք բունը: Շնորհաւորում եմ անմոռանալի մայրիկիս տօնը...»

ՏՄՏԻԿ. (արտասուքը սրբելով): Ախ, Մահակ ջան, ո՞ւր ես...

ՍԵՐՈՒՅ. (շարունակելով)... Թող քո նոր ճուտերից նա, ով որ քեզ համար կը կարգայ իմ այս խօսքերը, ամուր, ամուր համբուրի տատիկի պայծառ երեսը: Քեռի Մահակ... (մտնելով է զգացած տատիկին եւ ամուր համբուրում, սպասմանում է իր ընծան):

1001  
1981

SU.SI.Y. Էս էլ ի՞նչ է:

ՍԵՐՈՒՐ. Այս էլ իմ ընծան է...

SU.SI.Y. Շատ ապրես, տղաս. երկու իմ տարսս դառնաս (նորից գրկում է):

ՄԱՐԳԱՐ. (որ շարունակ աշխատում էր առաջն ընկնել ու իր ընծան տալ, արտասանում է). Տատիկ, տատիկ...

SU.SI.Y. (ընդմիջելով) Մի սրան նայե՛ք, սա էլ որ տատիկի համար ընծայ է պատրաստե՛լ:

ՄԱՐԳԱՐ. (նորից սկսում է).

Տատիկ, տատիկ, միշտ անբաժան

Մեզ հետ ուրախ դու մնաս,

Երկար ապրես, ու իմ ընծան

Միշտ քո ձեռքիդ ունենաս...

ԵՐԱՆՈՒՂԻ. Կեցցէ Մարգարը:

SU.SI.Y. Արի, արի, իմ փոքրիկ բանաստեղծ. քո ընծան մի ուրիշ տեսակ բան պիտի լինի... (գրկում է)

ՕՆՆԻԿ. (էլ չը սպասելով, մեկնելով իր ընծան).

Միշտ անպակաս լինենք քեզից...

ԶԱՐԻԿ. (ընդմիջելով). Միշտ մեր սեղանի ծայ-

րին բազմես...

ՕՆՆԻԿ. Քո օրհնութիւնը մեզ վրա լինի:

ԶԱՐԻԿ. Քո ազօթքը մեզ միշտ պահի...

(ըրրոր երեխաները փաթաթում են տատիկին):

ԵՐԱՆՈՒՂԻ. Խեղդեցիք տատիկին: Բաւական

է, բաւական է:

SU.SI.Y. (արտաշարժւած) Ապրիք, ապրիք...

ձեր ծնողների մխիթարանքը լինիք... Օր ունե- նաք...

ՄԱՐԳԱՐ. Կեցցէ տատիկը:

ԲՈՒՈՐԸ. Կեցցէ տատիկը:

SU.SI.Y. (շուրջը նայելով) Էս ի՞նչպէս զարգա- րել էք սենեակը. էս ի՞նչքան ծաղիկներ էք բե- րել: Ուզում էք, որ տատիկը ջահիլանայ, հա՛... Էս փաթեթները մէջ էլ երեւի կանֆետներ են, նուշի հաց... Ես հօ ձեր պատիկ երեխան եմ... Այ էս՝ մայրիկի ընծան է (բաց է անում փաթեթը): Բռնութի տուփ: Ի՞նչ ժամանակին է. իմս ար- դէն հնացել է... Նա միշտ իմանում է թէ ինձ ի՞նչ է պէտք: Եւ էլ ի՞նչ սիրուն է (ընդհանուր շփոթուծին): Էս էլ Յասմիկինն է... Տեսնենք...

ՅԱՍՄԻԿ. (շփոթւած) Տատիկ... Ես չըզիտէի... Ես կարծում էի...

SU.SI.Y. (նորից հանում է մի տուփ) Էլի բըռ- նութի տուփ... Խելօք ես մտածել: Էն մէկը կը բանեցնեմ աօներին, էս էլ լի օրերը (երրորդ փաթեթն է վերցնում):

ՄԱՐԳԱՐ. Ախ, տատիկ, տատիկ՞ ջան... Ես չէի կարծում որ...

SU.SI.Y. Էս էլ երրորդը: Չեր խաթեր հա- մար էս տարի պիտի շուտ շուտ խարբուխ ունենամ... (ուզում է չորրորդը վերցնի):

ՍԵՐՈՒՐ. Տատիկ, ներիր...

SU.SI.Y. Չլինի՞ թէ դու էլ... (բաց է անում, նորից տուփ): Էս տարի խանութ եմ բաց անե- լու և բռնութի տուփեր ծախելու... Կը կանգ- նեմ դռան առջև ու կը կանչեմ. (նմանեցնելով վաճառականին) «Էյ, համեցէք, համեցէք, բըռ-

նութի տուփեր եմ ծախում, ջոկովի տուփեր»...  
Այ էս փաթեթի մէջ նոր բան կը լինի...

ՉԱՐԻԿ (յուսահատ). Տատիկ ջան, տատիկ...

ՏԱՏԻԿ. Երևի ձեռագործ է. (բաց է անում՝  
մ'ի ձեռագործ քսակի մ'իջից հանում է կրկին քրո-



նութի տուփ): Էսքանը ինձ մինչև մեռնելը բաւա-  
կան է:

ՕՆՆԻԿ. Իմա բաց չանես, տատիկ, բաց  
չանես:

ՏԱՏԻԿ. Ի՞նչու, տղաս:

ՕՆՆԻԿ. (յուսահատ) Ես էլ, ես էլ... (տատիկը  
հանում է կրկին մ'ի տուփ):

ԵՐԱՆՈՒՀԻ. Այսպէս էլ դժբախտութիւն:

ՏԱՏԻԿ. Էս էլ վեցերորդը: Խօսք մէկ էիք  
արել, ի՞նչ է...

ԵՐԵՆԱՆԵՐ. (միասին) Ոչ, ոչ, գաղտնիքն է  
մեղաւոր, գաղտնիքը:

ՏԱՏԻԿ. Ի՞նչ գաղտնիքը:

ՕՆՆԻԿ. Ամեն մէկս ուզում էր, որ ուրիշը  
չը գիտենայ:

ՍԵՐՈՒՐ. (Օննիկի հետ միաժամանակ) Մի-  
մեանց չէինք ասում:

ՄԱՐԳԱՐ (նոյնպէս): Ես առաջինը մտա-  
ծեցի...

ՉԱՐԻԿ և ՅԱՍՄԻԿ. Վայ, հիմա ի՞նչ անենք:

ՏԱՏԻԿ. Ու ձեր գաղտնիքից այ ի՞նչ դուրս  
եկաւ: (Որախ) Լսեցէք, բոլորդ էլ շատ լաւ էք  
մտածել (շարում է տուփերը): Էս առաջին տուփը,  
որ մայրիկն է ուղարկել, կը բանեցնեմ կիրակի  
օրերը, էս միւսը՝ երկուշաբթի, էս երրորդը՝  
երեքշաբթի, էս չորրորդը՝ չորեքշաբթի, հինգե-  
րորդը՝ հինգշաբթի, վեցերորդը ուրբաթ... Տէր  
Աստուծ, բաս շաբաթ օրւայ որ չունեմ: Իմ  
հինը բանեցնեմ:

ԵՐԱՆՈՒՀԻ (արագ մօտենում է եւ համբուրում  
մօրը) Մայրիկ ջան, ես էլ մտածեցի որ հին  
տուփդ բանի պէտք չէ... Ահա էս էլ շաբաթ օր-  
ւայ համար (հանում է փեշի տակից բնուլթի մի  
տուփ):

ՏԱՏԻԿ (ծիծաղելով). Այ օրհնւես դու. ի՞նչ  
ժամանակին վրա հասար:

ՕՆՆԻԿ, ՄԱՐԳԱՐ, ՅԱՍՄԻԿ. Կեցցէ մօրաքոյրը:  
 ՍԵՐՈՐ, ԶԱՐԻԿ. (նրանց հետ միաժամանակ)

Կեցցէ մայրիկը:

ԲՈՂՈՐԸ. Կեցցէ տատիկը... (ծափ տալով

երգում են) Երկուշաբթի փրը՛շտ, փրը՛շտ, փրը՛շտ,

Երեքշաբթի փրը՛շտ, փրը՛շտ, փրը՛շտ.

Ամեն օր փրը՛շտ փրը՛շտ, փրը՛շտ,

Ապրի տատիկը մի՛շտ, մի՛շտ...

(Տատիկը փրշտում է):

Եր - կու - շաֆ Թի Իրեւր Իրեւր Իրեւր. Ի - ռէ - շաֆ - Թի Իրեւր Իրեւր Իրեւր.

ա - ղի օր Իրեւր Իրեւր Իրեւր, ապ - րի յա - ցի - կէ Իրեւր Իրեւր.


Վ ա Ր ա գ ո յ Ր

« Հ Ա Ս Կ Ե Ր Ի » ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Քսան օր գետնի տակ 20 կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . . . . 20 կ.
- Վ 3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամբորդներ . . . . . 25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . . . 25 »
- Վ 5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պիէս . . . . . 8 »
6. Ռ. Պատկանեան, Չախու . . . . . 20 »
- Վ 7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . . . 10 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ. Բեռի Մկօ . . . . . 20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու դիասաղը . . . . . 12 »
10. Կապուան. Ֆիօրէ փերին, Ասեղ . . . . . 12 »
11. Իւանովիչ. Աւօհնց Ստեփանը . . . . . 20 »
12. Կ. Լուկաշևիչ. Ծաղիկների մէջ . . . . . 12 »
13. Աթ. Խնկոյեան. Աղւէսն ու արջը . . . . . 20 »
14. Նիկ. Մարգսեան. Կենդանիների գոյները . . . . . 15 »
15. Բրետ Հարտ. Մլիս . . . . . 12 »
16. Է. Սիւսոն-Տօմպսօն Կախականջիկը . . . . . 12 »
17. Գ. Շլաբ. Արագոնաւորդները . . . . . 25 »
18. Աթ. Խնկոյեան. Պապն ու շաղկամը . . . . . 12 »
19. Կար. Միրիանեան. Մայրը . . . . . 12 »
20. Յովհ. Թուման. Բէֆ անողին քէֆ չի պակսիլ . . . . . 20 »
21. Պուշկին. Բնած դժխուէին . . . . . 20 »
22. Ն. Մարգսեան. Թէ ինչպէս են տարածոււմ սերմերը . . . . . 20 »
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածոււմ սերմերը . . . . . 20 »
24. Կարլ Էվալդ. Տասներկու քոյր . . . . . 10 «
25. Ֆէրբօ. Տօնի համար . . . . . 10 »
26. Աթ. Խնկոյեան. Փեսացու մուկը . . . . .
27. Աթ. Խնկոյեան. Աղւէսն ու Կոռնիկը . . . . . 10 »
28. Մամին-Սիբիրեակ. Ծեր ճնճողուկը, ծիճու, Պառաւ Մոռանի խոստովանքը . . . . . 12 »
29. Վարդան Վարդանեան. Մաարդն ու Նամարդը 10 »
30. Աթ. Խնկոյեան. Ծիտն ու Որբերը . . . . . 5 »
31. Էրնստ Սէտօն-Տօմպսօն. Կաղիկ քոթոթը . . . . . 20 »
32. Կ. Մ. Ստանիսկովիչ. Դայեակը . . . . . 20 »

**ՀԱՍԿԵՐ ԱՄՍԵՆԻՒՄԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ**

1. Ստ. Լիսիցեան. Պանձըտոցիկ . . . . .	5 կ.
Ստ. Լիսիցեան. Ազատութիւն . . . . .	5 »
— 2. Սէյրի. Նոր վարժունքն . . . . .	5 »
— 3. Սէյրի, ես իշխան եմ . . . . .	5 »
4. Ստ. Լիսիցեան. Գաղանիք . . . . .	5 »
5. Ժորժիկ Մանէլեան. Փնթի . . . . .	5 »
Գ. Շահ-Պարոն. Գող—սիրալը դող . . . . .	5 »
6. Տիկ. Մարգարիտ. Դասարանում . . . . .	5 »
7. Յ. Բեօսեան եւ Ստ. Լիսիցեան. Քեռին . . . . .	5 »
8. Դլազունով. Տիկին Սիրան, փ. Կ. Միլիանեան . . . . .	5 »
9. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ . . . . .	8 »
10. Կ. Լուկաշեւիչ. Ծաղիկների մէջ . . . . .	12 »
11. Փէրրո. Տօնի համար . . . . .	10 »



ՀՀ Ազգային գրադարան

NL0349117

33434

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

Պահեստը՝ Թիֆլիս «Գիր» գրախանութում: